



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 1-Ա

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ, ՏԱԹԵՎԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԿՆԻՔՆԵՐ, ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ, ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ, ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ, ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԵՎ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ ԴՐՈՇՄԱԿՆԻՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերը, Բարձրագույն դատական խորհրդի 2024 թվականի հունվարի 22-ի թիվ ԲԴԽ-4-Ո-11 որոշումը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասի 8-րդ կետով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասի 12-րդ կետով, Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հունիսի 4-ի թիվ ԲԴԽ-13-Ո-22 որոշման 3-րդ հավելվածի 1-ին կետով և 2-րդ կետի «ա» ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավորներ Գևորգ Պողոսյանին, Տաթևիկ Մուրադյանին տրամադրել իրենց անվամբ կնիքներ:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավորներին տրամադրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի անվանմամբ «35-36» հերթական համարներով, Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

դատարանի դատավորին՝ «11» հերթական համարով, Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներին՝ «11-12» հերթական համարներով, Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորին՝ «13» հերթական համարով, Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորին՝ «14» հերթական համարով դրոշմակնիքներ:

Կ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

**2024թ. հունվարի 23
ք. Երևան**